



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 27 » մայիսի 2019 թվականին N: 229-Գ ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N7 ՀԻՄՆԱԿԱՆ
ՊՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N128-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 7-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին
կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի, «Պետական ոչ
առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության
կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված
«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական
հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի
կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով
հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական
ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության
կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ, 3-րդ
ենթակետերի, 7-րդ, 9-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N7 հիմնական դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի մայիսի 8-ի նիստի թիվ 6 արձանագրությունը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) անդամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Տիգրան Ղարիբյանի, Մակար Մելքոնյանի, մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Զեմֆիրա Գրիգորյանի, Անահիտ Անտոնյանի փազրությունները և նրանց փոխարեն խորհրդի կազմում երեք տարի ժամկետով համապատասխանաբար հաստատել Արմեն Ստամբոլցյանին, Կարեն Բաղիշյանին, Աննա Հակոբյանին, Մարի Ավետիսյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N128-Ա որոշման հավելվածում «Ղարիբյան Տիգրան», «Մելքոնյան Մակար», «Գրիգորյան Զեմֆիրա», «Անտոնյան Անահիտ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Ստամբոլցյան Արմեն», «Բաղիշյան Կարեն», «Հակոբյան Աննա», «Ավետիսյան Մարի» բառերով:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



Հ/Հ	դպրոցի անվանումը	ՀՀ ԿԳԱ ներքև	ՀՀ Շիրակի մարզպետի ներքև	ՏԻՄ ներքև	Մանկապահի ներքև	Մեղ. Նորիի ներքև
3	2	3	4	5	6	7
2	«Գյումրու բնիկ 7 կիմնական դպրոց» ՊՈԱԿ	Սյունիքի մարզ	Բաղիշյան Կարեն* Մուսաբաբյան Արմեն *	Գուսաբաբյան Հենրիկ	Ավետիսյան Մարի* Հակոբյան Աննա *	Հարությունյան Գարսև Ջաբարյան Ազատ